

պետական բանկի մասնաճյուղն է, 11 բանկեր հայկական, կամ ուղղակի արտասահմանյան կապիտալով բանկեր են, իսկ 9-ը բանկեր արտասահմանյան բանկերի դուստր բանկեր են, որոնք ցույց են տրված աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

ՀՀ-ում գործող արտասահմանյան բանկերի կազմակերպչական ձևերը¹

Հայաստանյան դուստր բանկեր	Մայր բանկ	Մասնաճյուղեր և դուստր ընկերություններ
ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ	Կրեդիտ Ագրիկոլ բանկ	40 մասնաճյուղ և 2 դուստր ընկերություն
Անելիք բանկ	Credit S.A.L.	12 մասնաճյուղ և 1 դուստր ընկերություն
Առէկսիմբանկ Արմենիա	Գազպրոմբանկ	15 մասնաճյուղ
Բիբլոս բանկ Արմենիա	Բիբլոս բանկ Էս-Էյ-Էլ	3 մասնաճյուղ
ԲՏԱ բանկ Հայաստան	ԲՏԱ բանկ	5 մասնաճյուղ
ԷյՋ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան	ԷյՋ-Էս-Բի-Սի	6 մասնաճյուղ
Հայբիզնես բանկ	Ուկրպրոմբանկ	25 մասնաճյուղ
Պրոկրեդիտ բանկ	Պրոկրեդիտ հոլդինգ	9 մասնաճյուղ
ՎՏԲ Հայաստան	ՎՏԲ	68 մասնաճյուղ

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ քաղաքական գործոնների ազդեցությունն առավել զգալի է բանկային ոլորտում: Բանկային բիզնեսի բնույթի բարդացումը և նրա ծավալների աճը (այդ թվում՝ սպառողական վարկավորման) կապված են ռիսկերի կուտակման հետ: Բանկային ոլորտի զարգացման այս հատվածը գտնվում է կենտրոնական բանկերի և համապատասխան ծառայությունների կողմից իրականացվող վերահսկողական գործունեության կենտրոնում: Ավելին. զարգացած երկրների բանկային համակարգերի ուսումնասիրության արդյունքում կարևոր է նշել, որ բարենպաստ միտումների հետ մեկտեղ, որոնք մենք իրավունք չունենք գերազնահատելու, այս երկրների բանկային համակարգերում գոյություն ունեն թերևս չուծված խնդիրներ: Բանկային հատվածին բնորոշող խնդիրները հիմնականում կրում են կառուցվածքային բնույթ և կապված են տնտեսության ընդհանուր վիճակի, դրամական հարաբերությունների զարգացման աստիճանի և իրավական բազայի հետ:

ԼԻԼԻԹ ԱՎԴԱԼՅԱՆ
ՎՊՄԻ դասախոս

«ԲԱԶԵԼ-1», «ԲԱԶԵԼ-2» ԵՎ «ԲԱԶԵԼ-3» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐԸ ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒԻՋ

1975թ. Շվեյցարիայի Բազել քաղաքում տասը առաջատար զարգացած երկրների Կենտրոնական բանկերի կողմից ստեղծվեց բանկերի վերահսկողության բազելյան կոմիտեն: Դրա հիմնումը խոշոր արևմտագերմանական բանկի սնանկացման և ազգային կարգավորման մարմինների մոտ վերազգային բանկերի ցանցի գործունեության վերահսկման համար գործուն մեխանիզմների և գործիքների բացակայության պատասխան միջոցն է: Այդպիսի վերահսկողության խնդիրն այն է, որ գալով ազգային տնտեսություն՝ վերազգային բանկի մասնաճյուղը կարող է մեծամասշտաբ բանկային գործունեություն ծավալել և երկար ժամանակ ֆինանսապես առողջ երևալ, իր գործունեության մեջ ավելի ու ավելի մեծ թվով ընդունող երկրի ռեզիդենտներ ներգրավել: Սակայն վերազգային բանկի մասնաճյուղի

¹ <http://www.bankir.am/params.php?lang=1&color=b&st=report>

կենսունակությունը կախված է ոչ այնքան տվյալ երկրի ազգային բանկային օրենսդրության նորմատիվներն իրականացնելուց, որքան ամբողջ վերազգային բանկային կառուցվածքի կենսունակությունից, որի մեծ մասը գտնվում է այդ երկրի սահմաններից դուրս: Իսկ բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության ազգային մարմինների լիազորությունները վերազգային բանկի մասնաճյուղի տեղաբաշխման երկրում սահմանափակվում են ազգային սահմաններով: Ուստի, անհրաժեշտություն առաջացավ ձևավորել, առաջին հերթին, տարբեր երկրներում միջազգային բանկային գործունեության նկատմամբ միասնական պահանջներ, և երկրորդ՝ համաձայնության գալ ամբողջ վերազգային բանկային ցանցի գործունեության նկատմամբ գործուն վերահսկողության սկզբունքների վերաբերյալ և վերացնել միջազգային գործառնությունների նկատմամբ հատվածավորված հսկողությունը:

1975թ. Բազելյան կոմիտեն պատրաստեց արտասահմանյան բանկային հաստատությունների նկատմամբ վերահսկողության Կոնկորդատը¹, որը պարունակում է հետևյալ դրույթները.

- Արտասահմանյան բանկային հաստատության գործունեության նկատմամբ հսկողությունն իրականացնում են բանկի ծագման երկրի և ընդունող երկրի մարմինները:
- Ոչ մի բանկային հաստատություն չպետք է խուսափի վերահսկողությունից:
- Իրացվելիության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են ընդունող երկրի մարմինները:
- Վճարունակության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ծագման երկրի մարմինը, եթե երկրում գործում է արտասահմանյան բանկի մասնաճյուղ, և վերահսկողությունն իրականացնում է ընդունող երկիրը, եթե ստեղծվել է դուստր բանկ:
- Անընդհատ իրականացվում է տեղեկատվության փոխանակություն ծագման երկրի և ընդունող երկրի վերահսկող մարմինների միջև:

1988 թվականի Բազելյան համաձայնագրի հիմնական նպատակն է՝ որոշել կապիտալի բավարարության հաշվարկի միջազգային ընդունված չափանիշը, որպեսզի տարբեր երկրների բանկերը կարողանան համադրվել միջազգային չափորոշիչներով պատրաստված հաշվետվությունների հիման վրա:

Բազել-1-ի հիմնական պահանջը հաշվարկային կապիտալի առկայությունն է շուկայական և վարկային ռիսկի որոշված մակարդակի ծածկման ուղղությամբ: Տվյալ մակարդակը սահմանվել է բանկի ակտիվների հաշվարկային ցուցանիշների 8%-ից ոչ պակաս²:

Բազել-2 համակարգը հիմնականում բացահայտում է ռիսկերի կառավարման, բանկերի կողմից կորպորատիվ կառավարման իրականացման, նաև բանկային վերահսկողության կատարելագործման և թափանցիկության ավելացման հիմնախնդիրները: Բազել-2-ում քննարկվում են գլոբալ ֆինանսական համակարգի կայունության բարձրացման խնդիրները: Կապիտալի չափորոշիչների նոր համակարգը (Բազել-2) փորձում է հասնել այդ նպատակներին 3 փոխլրացնող տարրերի միջոցով: Բազել-2-ի կողմից առաջարկվող նոր փիլիսոփայության հիմնախնդիրն է յուրաքանչյուր առանձին ձախողման կանխատեսումը, քանի որ անհաջողության որոշ դեպքերում շուկայից վտարվում են վատ կառավարվող բանկերը, որոնք մյուս բանկերին խրախուսում են բարձրացնելու կառավարման որակը:

Հետևաբար Բազել-2 ներկայացնում է բանկերում ռիսկերի կառավարման ընդունակությունների գնահատում: Վերահսկողության մարմինները պետք է կարողանան հասցնել բանկերի ղեկավարությանը «հորիզոնում» ձևավորվող ռիսկերը³: Մեր կարծիքով, բանկային վերահսկողության մարմիններն իրենց ուժերը պետք է կենտրոնացնեն ոչ միայն վարկային կազմակերպությունների ներկա ֆինանսական դրության գնահատման վրա, այլև ավելի շատ՝ ներքին պրոցեսների և վերահսկողության կառուցվածքների որակի գնահատման վրա, որոնք կարող են պահպանել ապագա կորուստներից:

¹ Синки Дж.-мл., “Управление финансами в коммерческом банке”, 1994, стр. 458.

² Basle Committee of on Banking Supervision “Lehman Brothers” July, 2003. Basle, Switzerland. 15-19p.

³ Basle Committee of on Banking Supervision “Lehman Brothers” July, 2003. Basle, Switzerland. 12-16p.

Բազել-1-ի վերանայման նպատակը հետևյալն է՝ մշակել կապիտալի չափման մեթոդիկան, որը ներառում է՝

- Նոր համակարգը ավելի զգայուն պետք է լինի ռիսկերի նկատմամբ, քան հիմը (Բազել-1):
- Ավելի հստակ պետք է արտահայտի միջազգային շուկայում գործող բանկերի գործունեության ուղղվածությունը:
- Պետք է ընդունակ լինի հարմարվելու շուկայի և ծառայությունների զարգացման պրոցեսներին:
- Պետք է կարողանա բարձրացնել շուկայում տիրող կարգապահությունը տեղեկատվության թափանցիկության կատարելագործման միջոցով:
- Պետք է կարողանա կապակցել կապիտալին ներկայացվող պահանջները ռիսկերի կառավարման ժամանակակից մեթոդների հետ:

Կապիտալի բավարարության վերաբերյալ նոր համաձայնագիրը (Բազել-2)¹ հիմնվում է 3 տարրերի միասնության վրա՝

- կապիտալին ներկայացվող նվազագույն պահանջները,
- հսկողության գործընթացը,
- շուկայական կարգապահության պահպանման նպատակով տեղեկատվության բացահայտումը:

Այնուամենայնիվ, և՛ Բազել-1-ում, և՛ Բազել-2-ում բացակայում է հստակեցված մեթոդաբանական բազան: Մեր կարծիքով, ներքին վերահսկողության ծառայությունների հիմնական խնդիրը կարելի է ձևակերպել 2 մակարդակով.

- ստուգումների անցկացման մեթոդների և ձևերի մշակում,
- ստուգումների ժամանակ օգտագործվող փաստաթղթերի ցանկի որոշում:

Քանի որ սկսվող ճգնաժամը բավականին ուժեղ հարված հասցրեց բանկային համակարգին, ապա նման իրավիճակը հնարավոր չէր թողնել առանց ուշադրության, որին հետևեց համապատասխան արձագանքը:

Բանկային հսկողության Բազելյան կոմիտեն 2010թ. սեպտեմբերի 12-ին հավանության արժանացրեց համաշխարհային բանկային հատվածի գլոբալ բարեփոխումը, որը կոչվեց «Բազել-3»: Այս ծրագրի հեղինակները հույս ունեն, որ այն շեշտակի կբարձրացնի համաշխարհային բանկային համակարգի (նաև ամբողջ ֆինանսական համակարգի) կայունությունը՝ առաջին հերթին իրացվելի ակտիվների ավելացման և նրանց որակի բարելավման հաշվին: Բանկերի կապիտալի և ակտիվների կառուցվածքի նկատմամբ նոր պահանջների սահմանման գործընթացը կսկսվի 2013թ. հունվարի 1-ից և կավարտվի 2019թ. սկզբին: Մասնավորապես, էականորեն կաճի բանկի սեփական կապիտալի մեծությունը մինչև իրացվելի պահուստի նվազագույն շեմի 4,5%-ը (նախկինում այն կազմում էր 2%)²:

Նախկին 4,5%-ի փոխարեն մինչև 6% կբարձրանա նաև բանկի առաջին մակարդակի կապիտալի շեմը (այն է՝ առավել իրացվելի ակտիվները): Բացի այդ՝ Բազելյան կոմիտեի կողմից ընդունված որոշումների համաձայն՝ յուրաքանչյուր բանկ պետք է ձևավորի հատուկ պահուստային կապիտալ 2,5%-ի չափով:

Ամբողջ բանկային համակարգի կայունացման նպատակով ընդունվել է որոշում, համաձայն որի համակարգային ճգնաժամի դեպքում բանկերը պարտավոր են հատկացնել հատուկ կայունացման ֆոնդին կապիտալի 2,5%-ը՝ կախված բանկի մեծությունից և խոցելիությունից: Բացի այդ՝ ընդունվել է պայմանավորվածություն, համաձայն որի պետությունները մասնավոր բանկերին կարող են տրամադրել նոր կապիտալ մինչև 2018թ. հունվարի 1-ը³:

«Լեման Բրադերզ» ամերիկյան բանկի սնանկացումից 2 տարի անց, երբ առաջացավ համաշխարհային ֆինանսական և բանկային համակարգերի փլուզման վտանգը⁴, «Բազել-3»-ի

¹ Basle Committee of on Banking Supervision “Lehman Brothers” July, 2003. Basle, Switzerland. 27-29p.

² Basel III: “Making Banks Stronger or Not?”. ATCA. London, UK - 25th January 2010. 15-20p.

³ Basel III: “Making Banks Stronger or Not?”. ATCA. London, UK - 25th January 2010. 32p.

⁴ Basle Committee of on Banking Supervision “Lehman Brothers” July, 2003. Basle, Switzerland. 5-6p.

ընդունումը հանդիսացավ վճռական քայլ այդ համակարգի ամրապնդման գործում¹:

Մեր կարծիքով, բանկային ակտիվների կառուցվածքի և որակի նկատմամբ նոր նորմերի և չափանիշների սահմանումը ոչ միայն պայմաններ կստեղծի բանկերի կայունության և հուսալիության շեշտակի բարձրացման համար, այլ նաև կբարձրացնի նրանց ընդունակությունը նոր ֆինանսական ցնցումներին դիմակայելու համար:

«Բազել-3» համաձայնագիրը ուղղված է բանկային ստանդարտների հիմնավոր ամրապնդմանը: Նշենք, որ համաշխարհային շուկաները դրականորեն արձագանքեցին «Բազել-3»-ի նորություններին:

Բանկային ստանդարտների կոշտացումը կարելի է դիտել որպես կարևոր տարր նոր ֆինանսական ճգնաժամերի կանխարգելման գործում:

«Բազել-3»-ի գլխավոր նպատակն էր ֆինանսական կորուստների ծածկման նպատակով բանկերի մոտ ազատ կապիտալի ավելացումը: Բանկային մասնագետների կարծիքով նոր ֆինանսական ցնցումների դեպքում որպես բանկերի հիմնական պաշտպանություն պետք է ծառայեն առաջին մակարդակի հիմնական կապիտալի իրացվելի պահուստը և կայունացնող պահուստը, որոնք միասին կազմում են բանկային կապիտալի 7%-ը: Ընդ որում 2016-2019թթ. ժամանակահատվածում բանկերը պետք է ձևավորեն բուֆերային պահուստային կապիտալ²:

Որոշ բանկերի համար «Բազել-3»-ի ընդունումը ենթադրում է նոր իրացվելի միջոցների ներգրավման անհրաժեշտություն՝ առաջին հերթին բաժնետոմսերի թողարկման հաշվին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սեփական կապիտալի վերաբերյալ առավել կոշտ կանոնների սահմանումը արդյունավետ միջոց է ֆինանսական համակարգի կայունացման գործում, պետք է նշել, որ «Բազել-3»-ի ընդունումը կարող է ունենալ իր ծանր հետևանքները մանավանդ փոքր բանկերի համար: Կապված սեփական կապիտալի նկատմամբ պահանջների բարձրացման հետ, մի խումբ բանկեր կարող են դառնալ կլանման և միաձուլման գոհ կամ կարող են ընդհանրապես անհետանալ:

Մի շարք վերլուծաբանների կարծիքով «Բազել-3»-ում իրացվելիության նկատմամբ սահմանված կանոնները կարող են հանգեցնել նրան, որ բանկերը հակված կլինեն հիմնականում տրամադրելու կարճաժամկետ վարկեր, ինչը մեծ հարված կհասցնի միջին և փոքր ձեռնարկություններին:

Բազելյան կոմիտեի կողմից ընդունված որոշման համաձայն, այն բանկերը, որոնք չեն կարող կիրառել հաստատված նորմերը սահմանված ժամկետներում, ստիպված կլինեն կրճատել բաժնետոմսերի դիմաց դիվիդենտների վճարումը:

Բանկերը փորձում են պայքարել, որպեսզի նոր համակարգին անցնելու համար տրամադրվի բավականաչափ ժամանակահատված, հակառակ դեպքում նրանք ստիպված կլինեն հրաժարվել մեծ քանակի վարկերից, ինչը կարող է խոչընդոտել տնտեսական աճը: Բավականին երկար անցումային շրջանի սահմանումը կնպաստի, որպեսզի բանկերը կարողանան անհրաժեշտ լրացուցիչ կապիտալը: Նրանց կարծիքով այդ գործընթացի համար նպատակահարմար է համարվում 10-12 տարի ժամանակահատվածը:

Ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների վերլուծությունների հիման վրա կարելի է պնդել, որ բանկերը, որպեսզի կարողանան խուսափել ռիսկերից, պետք է ապահովված լինեն բավականաչափ սեփական կապիտալով: Իսկ ամերիկացի վերլուծաբանների կարծիքով որոշ բանկեր ոչ միայն չեն կարողանում պահպանել բաժնետիրական և փոխառու կապիտալի միջև հարաբերակցության մակարդակը, այլ նաև թաքցնում են ռիսկերի իրական ծավալը:

Հետևաբար, սեփական կապիտալի վերաբերյալ կոշտ կանոնների սահմանումը կարող է հանդիսանալ իրական միջոց ֆինանսական համակարգի կայունության բարձրացման գործում:

¹ Basel III: “Making Banks Stronger or Not?”. ATCA. London, UK - 25th January 2010. 16-18p.

² <http://www.km.ru/biznes-i-finansy/obzory/bankovskii-sektor/12860>

Չնայած համաշխարհային ֆինանսական և տնտեսական ճգնաժամը հաստատեց համաշխարհային ֆինանսական համակարգի թույլ կողմերը, նախատեսվող բարեփոխումներն անխուսափելի են: Բավականին վճռական է տրամադրված նաև Եվրահանձնաժողովը, որը հաստատեց, որ բանկերի սթրես-թեսթավորման գործընթացը պետք է կրի մշտական բնույթ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ «Բազել-3»-ի ընդունումը էականորեն կբարձրացնի բանկերի հուսալիության աստիճանը անկայուն ֆինանսական պայմաններում:

ՔՐԻՍՏԻՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.*

ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՊԱՔԱԿԱՆՈՒԹՅՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հայաստանը անցումային ժամանակաշրջանում գտնվող բազմաթիվ այլ երկրների շարքում կանգնած է կայուն զարգացման ապահովման լրջագույն խնդրի իրականացման առջև, որի լուծումը թույլ կտա առաջիկա տարիների ընթացքում հասնել «ոսկե միլիարդ» որակվող երկրների մակարդակին՝ բնակչության բարեկեցության, տեխնոլոգիական զարգացման, շրջակա միջավայրի պահպանման և այլ բնագավառներում:

Հարկային քաղաքականության իրականացման ներկայիս ձևը իրական ձևախեղումներ է առաջացնում հիմնարար ինստիտուտների գործունեության մեջ՝ պայմանագրերի կատարում, սեփականության իրավունքի, հավասար հնարավորությունների վերաբերյալ օրենքների կիրառում, ինչը, բազմիցս ուսումնասիրվել և վերլուծվել է հայ և արտերկրի բազմաթիվ տնտեսագետ-հետազոտողների կողմից ինչպես հայրենական, այնպես էլ միջազգային տարբեր ֆորումներում:

Ուստի, մենք գտնում ենք, որ Հայաստանի ներկա պայմաններում հենց հարկային քաղաքականությունն է համակարգի ձևախեղման հիմնական տարրը և պահանջում է կտրուկ բարեփոխումների իրականացում, որի հիմքում ընկած պետք է լինի հետևյալ սկզբունքը. հարկային համակարգի ֆիսկալ դերը պետք է փոխարինվի ծառայություն մատուցողի դերով, որն, իր հերթին, կապահովի ֆորմալ ինստիտուտի՝ օրենքի պահանջների կատարումը:

Տնտեսագիտական գրականության մեջ հարկային խնդիրներից առավել ուշադրություն է հատկացվում հարկային բեռի օպտիմալացմանը, հարկի դրույքաչափերին, հարկային արտոնություններին, հարկային պարտավորություններին և հարկային ոլորտին վերաբերող այլ հարցերի: Սակայն, կարծում ենք, որոշակի բացթողումներ, թերացումներ գոյություն ունեն տարբեր հարկատեսակների հաշվարկման մեխանիզմների լուսաբանման առումով: Մասնավորապես, խոսքը վերաբերում է հարկային բարեփոխումների իրականացման ռազմավարական ուղիներին, մասնավորապես առանձին հարկատեսակների հաշվառման մեխանիզմների պարզեցման հիմնահարցերին:

Իհարկե, տվյալ հիմնախնդիրը չունի միանշանակ և բացարձակ մոտեցում հարկային քաղաքականության արդյունավետության աստիճանը գնահատելու հարցում: Բացի այդ, ՀՀ բարենպաստ բիզնես միջավայր ձևավորելու համար առանցքային նշանակություն են ստանում հարկային քաղաքականության հիմնական գործիքի՝ հարկային բեռի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, որն, ի վերջո, հարկ վճարողների հարկային բեռի հավասարաչափ բաշխման ու հարկային մուտքերի արդյունավետության բարձրացման հիմքն է կազմում:

Չնայած վերջին տարիներին հանրապետության հարկաբյուջետային ոլորտում իրականացված բարեփոխումներն էականորեն նպաստեցին հանրապետության հարկաբյուջետային համակարգի կայացմանը, այնուհանդերձ ներկայումս այդ ոլորտում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք նվազեցնում են համակարգի արդյունավետությունը, ինչը պայմա-